



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

Երևան, Կառավարական պտուհի 1

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 01/11

(«Վիմպերգ» ՍՊ ընկերության 02.10.2017թ.-ի վարչական բողոքը բավարարելու մասին)

Ք. ԵՐԵՎԱՆ

«16» նոյեմբերի 2017թ.

ՀՀ տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողովը՝ նախագահությամբ ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար Վահե Ստեփանյանի, ուսումնասիրելով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի 01.09.2017թ. թիվ 49/4 որոշման վերաբերյալ «Վիմպերգ» ՍՊ ընկերության 02.10.2017թ.-ի վարչական բողոքը՝

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Բողոքի էությունը և ներկայացված պահանջը.

«Վիմպերգ» ՍՊ ընկերությունը (այսուհետ նաև՝ Ընկերություն կամ Բողոք բերած անձ)՝ ի դեմս լիազորված անձ Սերգեյ Ամիրխանյանի, 02.10.2017թ.-ին բողոք է ներկայացրել ՀՀ տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով (այսուհետ՝ նաև Հանձնաժողով)՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Գանգատարկման հանձնաժողով) 01.09.2017թ. թիվ 49/4 որոշման (այսուհետ նաև՝ Որոշում) վերաբերյալ:

Բողոքը մուտքագրվել է Հանձնաժողովի քարտուղարություն 02.10.2017թ.-ին:

Բողոք բերած անձը նշել է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 20.02.2017թ. թիվ 1011913 հանձնարարագրի շրջանակներում իրականացված ստուգման

արդյունքներով ՀՀ ՖՆ Վանաձորի ՏՀՏ-ի կողմից 18.05.2017թ. ընդունվել է թիվ 1011913 ստուգման ակտը (այսուհետ՝ նաև Ստուգման ակտ), որի 3-րդ կետով Ընկերությանն առաջադրվել է լրացուցիչ հարկային պարտավորություն ԱԱՀ-ի գծով՝ 6.651.566,22 դրամի չափով:

ՀՀ ԿԱ ՊԵԿ իրավաբանական վարչության (այսուհետ՝ նաև Վարչություն) պետը 14.06.2017թ. կայացրել է թիվ 328/09 որոշումը՝ հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումար գանձելու մասին, որով որոշում է կայացվել «Վիմպերգ» ՍՊ ընկերությունից գանձել 6.493.785,22 դրամ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի կողմից 30.06.2017թ. ընդունվել է թիվ ԱՀ 035442 հանձնարարագիրը, որով ՀՀ ԿԱ ՊԵԿ իրավաբանական վարչության հարկադիր գանձումների բաժնի գլխավոր մասնագետներ Լ. Նիկողոսյանին և Գ. Մկրտումյանին հանձնարարվել է արգելանք դնել «Վիմպերգ» ՍՊ ընկերությանը պատկանող գույքի վրա՝ ընդհանուր 6.493.785,22 դրամի չափով:

ՀՀ ԿԱ ՊԵԿ իրավաբանական վարչության հարկադիր գանձումների բաժնի գլխավոր մասնագետներ Լ. Նիկողոսյանի և Գ. Մկրտումյանի կողմից 03.07.2017թ. կայացվել է թիվ 035442 որոշումը (այսուհետ՝ նաև Որոշում), որով 6.493.785,22 դրամի չափով արգելանք է դրվել «Վիմպերգ» ՍՊ ընկերության գույքի և դրամական միջոցների վրա:

Նշված որոշումը 14.08.2017թ. Ընկերության կողմից գանգատարկվել է վերադասության կարգով, որի քննության արդյունքում Գանգատարկման հանձնաժողովի 01.09.2017թ. թիվ 49/4 որոշմամբ գանգատը մերժվել է:

Բողոք բերած անձը գտնում է, որ Գանգատարկման հանձնաժողովի որոշումը ոչ իրավաչափ վարչական ակտ է հետևյալ հիմնավորմամբ.

- խախտվել է վարչական մարմնի կողմից փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկում իրականացնելու և գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները բացահայտելու՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը: Մասնավորապես, որոշման պատճառաբանական մասում Գանգատարկման հանձնաժողովը որպես գանգատի մերժման հիմք նշել է բացառապես այն հանգամանքը, որ Ընկերությունը, Ստուգման ակտը կազմելուց

հետո շուրջ մեկուկես ամիս շարունակելով իր բնականոն գործունեությունը, չի ձեռնարկել որևէ միջոց Ստուգման ակտի գումարը վճարելու ուղղությամբ, մինչդեռ ըստ Բողոք բերած անձի, Ընկերությունը դրանով նպատակ չի հետապնդում խուսափել իր հարկային պարտավորությունների կատարումից, այլ օգտվել է դատական պաշտպանության իր իրավունքից՝ վիճարկելով Ստուգման ակտը (վարչական գործ թիվ ՎԴ/6900/05/17):

- «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 10-րդ մասի 3-րդ պարբերության պահանջի տեսանկյունից խախտվել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.2 հոդվածի 2-րդ պարբերության պահանջը, որը սահմանում է գույքի վրա արգելանք դնելու երկու հիմքերի համաժամանակյա առկայություն՝ չկատարված պարտավորության չափը 500.000 դրամ և ավելի է, և հարկային մարմնի կողմից իրականացված վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված ապացույցները բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ հարկ վճարողը կարող է թաքցնել, փչացնել կամ սպառել վարչական ակտի կատարման համար անհրաժեշտ գույքը:

Հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի պահանջը՝ Բողոք բերած անձը գտնում է, որ վարչական մարմինն է կրում վերոհիշյալ երկու հանգամանքների ապացուցման պարտականությունը, մինչդեռ որևէ ապացույց այն մասին, որ տնտեսվարող սուբյեկտը կարող է թաքցնել, փչացնել կամ սպառել վարչական ակտի կատարման համար անհրաժեշտ գույքը գործում առկա չէ, իսկ Որոշումը հիմնված է հարկ վճարողի հարկային գործի և թիվ 328/09 վարչական վարույթի նյութերի ուսումնասիրության վրա, որոնք նման ապացույցներ չեն ներառում:

Վերոգրյալի արդյունքում Բողոք բերած անձը հիմք ընդունելով «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 9-րդ, «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43-րդ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ, 69-72-րդ հոդվածները՝ խնդրել է անվավեր ճանաչել Գանգատարկման հանձնաժողովի 01.09.2017թ. թիվ 49/4 որոշումը և բավարարել Ընկերության 14.08.2017թ. գանգատը:

2. Մասնակցի դիրքորոշումը.

Բողոք բերած անձի դիրքորոշումը հստակեցնելու նպատակով Հանձնաժողովը 2017թ.-ի նոյեմբերի 16-ին անցկացրել է լսումներ, որին ներկայացել էր «Վիմպերգ» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Սերգեյ Ամիրխանյանը:

Վերջինս լսումների ընթացքում պնդեց բողոքի շրջանակներում ներկայացված պահանջը և դրա իրավական և փաստական հիմքերը: Միաժամանակ Հանձնաժողովին ներկայացվեցին թվով վեց վճարման հանձնարարագրերի (անդորրագրերի, հանձնարարականների) պատճենները, որոնցով, ըստ Բողոք բերած անձի, հաստատվում է Ընկերության կողմից տարբեր հարկատեսակների գծով ընթացիկ վճարումներ կատարելու և դրանով իսկ բարեխիղճ հարկատու հանդիսանալու հանգամանքը:

3. Բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Բողոք բերած անձի և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում գտնում ենք, որ սույն դիմումի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստական հանգամանքները.

3.1 ՀՀ ԿԱ ՊԵԿ իրավաբանական վարչության 03.07.2017թ. թիվ 035442 որոշման համաձայն՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 30.06.2017թ. թիվ ԱՀ 035442 հանձնարարագրի հիման վրա և հարկ վճարողի հարկային գործի և թիվ 328/09 վարչական վարույթի նյութերի ուսումնասիրության արդյունքներով պարզվել է, որ «Վիմպերգ» ՍՊ ընկերության՝ պետական բյուջեի հանդեպ ունեցած հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով 05.06.2017թ. դրությամբ չկատարած հարկային պարտավորությունները կազմում են 6.493.785 ՀՀ դրամ, որը գանձելու վերաբերյալ Վարչության պետի կողմից 14.06.2017թ. կայացվել է թիվ 328/09 որոշումը:

Ըստ արգելանքի մասին որոշման, ուսումնասիրելով հարկ վճարողի հարկային գործը, հաշվի առնելով հարկերը ժամանակին չմուծելու հանգամանքը՝ վարչական մարմինը եզրահանգել է, որ ձեռք բերված ապացույցները բավարար հիմք են տալիս ենթադրելու Ընկերության կողմից վարչական ակտի կատարման համար անհրաժեշտ գույքը թաքցնելու, փչացնելու կամ սպառելու հնարավորությունը, որի

արդյունքում ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 և 30.2 հոդվածներով՝ որոշվել է արգելանք դնել «Վիմպերգ» ՍՊ ընկերությանը պատկանող անշարժ, շարժական գույքի, դրամարկղի, ՀՀ բոլոր առևտրային բանկերում առկա բոլոր բանկային հաշիվների վրա՝ 6.493.785 ՀՀ դրամի չափով և Ընկերությանն արգելել տնօրինել, տիրապետել, օգտագործել արգելադրված գույքը:

3.2 Ընկերությունը 14.08.2017թ.-ին գանգատ է ներկայացրել Վարչության 03.07.2017թ. թիվ 035442 որոշման վերաբերյալ:

3.3 Գանգատարկման հանձնաժողովի 01.09.2017թ. թիվ 49/4 որոշմամբ գանգատը մերժվել է:

3.4 ՀՀ վարչական դատարանում քննվում է թիվ ՎԴ/6900/05/17 վարչական գործն ըստ հայցի «Վիմպերգ» ՍՊ ընկերության ընդդեմ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի՝ 20.02.2017թ. թիվ 1011913 ստուգման ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

3.5. ՀՀ վարչական դատարանի՝ թիվ ՎԴ/6900/05/17 վարչական գործով «Հայցադիմումը վարույթ ընդունելու և նախնական դատական նիստ նշանակելու մասին» և «Ապացույց պահանջելու մասին» 21.07.2017թ. որոշումները մուտքագրվել են ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմ 27.07.2017թ.-ին:

3.6. Վարչական մարմնի կողմից գործի փաստական հանգամանքերի ex officio ուսումնասիրման շրջանակներում պարզվել է, որ գանձման որոշումը ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 21.08.2017թ. թիվ 11-4/31798-17 գրությամբ ներկայացվել է հարկադիր կատարման, որի արդյունքում ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայության Լոռու մարզային բաժնում 25.08.2017թ. հարուցվել է թիվ 03544555 կատարողական վարույթը և կայացվել է որոշում՝ պարտապանի գույքի նկատմամբ հետախուզում հայտարարելու և արգելանք դնելու մասին:

4. Պատճառաբանություններ և եզրահանգումներ.

Բողոքի և դրա քննարկման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքների ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը գտնում է, որ **բողոքը ենթակա է բավարարման՝** հետևյալ հիմնավորմամբ.

Սույն գործի քննության տեսանկյունից Հանձնաժողովն էական է համարում հետևյալ հարցադրմանն անդրադառնալը՝ Գանգատարկման հանձնաժողովն

արդյո՞ք պատշաճ ուսումնասիրել և գնահատել է քննարկվող գործի բոլոր փաստական հանգամանքները՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով սահմանված փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումն ապահովելու նպատակով՝ ուղղված գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները բացահայտելուն:

Նշված հարցադրմանն անդրադառնալու տեսանկյունից Հանձնաժողովն էական է համարում այն փաստը, որ ՀՀ վարչական դատարանի՝ «Հայցադիմումը վարույթ ընդունելու և նախնական դատական նիստ նշանակելու մասին» և «Ապացույց պահանջելու մասին» 21.07.2017թ. որոշումները 27.07.2017թ.-ին մուտքագրվել են ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմ, մինչդեռ Գանգատարկման հանձնաժողովի որոշումը կայացվել է ժամանակագրական առումով ավելի ուշ՝ 01.09.2017թ.-ին: Հետևաբար, վարչական մարմինը տեղեկացված է եղել թիվ ՎԴ/6900/05/17 վարչական գործով Բողոք բերած անձի կողմից ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 20.02.2017թ. թիվ 1011913 ստուգման ակտն անվավեր ճանաչելու պահանջի քննության մասին, որի վերաբերյալ, սակայն, որևէ դիրքորոշում չի արտահայտել, մինչդեռ Հանձնաժողովին ուղղված բողոքի շրջանակներում Բողոք բերած անձի կողմից էապես կարևորվել է նշված հանգամանքը, որպես առաջադրված հարկային պարտավորության չկատարման պատճառ:

Արդյունքում Հանձնաժողովը գտնում է, որ վերոհիշյալ փաստական հանգամանքի պատշաճ ուսումնասիրման և գնահատման բացակայությունը հիմնավորում է Գանգատարկման հանձնաժողովի որոշման բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկման բացակայությամբ կայացված լինելը՝ դրանով իսկ հանգեցնելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով և 57-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վարչական ակտին ներկայացվող պահանջների խախտմանը:

Վերոգրյալից ելնելով՝ Հանձնաժողովը գտնում է, որ առկա է Գանգատարկման հանձնաժողովի որոշումը բեկանելու համար «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 77-րդ հոդվածի 1-ին մասի

«ա» կետով սահմանված հիմք, այն է՝ առկա են սույն օրենքի 63-64-րդ հոդվածներով սահմանված հիմքերը:

Նույն օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն, անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է օրենքի խախտմամբ:

Վերոգրյալի արդյունքում՝ ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 77-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով, 76-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Վիմպերգ» ՍՊ ընկերության 02.10.2017թ.-ի վարչական բողոքը բավարարել. բեկանել ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի 2017թ. սեպտեմբերի 1-ի թիվ 49/4 որոշումը և պարտավորեցնել Գանգատարկման հանձնաժողովին կայացնել բարենպաստ նոր վարչական ակտ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ակտի ընդունման մասին վարչական վարույթի մասնակցին իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ՎԱՀԵ ՍՏԵՓԱՆՅԱՆ